

<http://schooldance.am> պորտալի օգտատիրոջ համաձայնագիր

## 1. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.1. Օպերատոր կամ Վիվա-USU՝ «USU Հայաստան» ՓԲԸ, համապատասխան լիցենզիայի հիման վրա գործող, հեռահաղորդակցության ծառայություններ մատուցող իրավաբանական անձ, Հայաստանի տարածքում շարժական բջջային կապի օպերատոր:

1.2. Բաժանորդ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, Օպերատորի հեռահաղորդակցման ծառայությունների սպառող, որը հանդիսանում է <http://schooldance.am> հասցեում Բովանդակության մատակարարի կողմից մատուցվող բովանդակության օգտատեր:

1.3. «School Dance»՝ Բովանդակության ծառայություններին բաժանորդագրության ավտոմատ կերպով երկարաձգվող ծառայություն, որի շրջանակներում բաժանորդներին տրամադրվում է մուտքի իրավունք Տեղեկատվական համալիրի Մեդիա բովանդակությանը՝ Բովանդակության մատակարարի կողմից մշակված տեսանյութերի տեսքով՝ ծառայությունից օրական օգտվելու դիմաց վճարման պայմանով:

1.4. Բովանդակության ծառայություն՝ «School Dance» ծառայության շրջանակներում հասանելի կապի ծառայություն, որը Բաժանորդին իր իսկ պահանջով տրամադրվող մուտքն է Տեղեկատվական համալիրի Մեդիա բովանդակությանը՝ Օպերատորի կապուղիների և սարքավորումների կիրառման միջոցով:

1.5. Տեղեկատվական համալիր՝ Բովանդակության մատակարարին պատկանող ծրագրային, ապարատային միջոցների ցանկ, որոնց միջոցով տրամադրվում է մուտք Բովանդակության ծառայություններին:

1.6. Բովանդակություն՝ վիզուալ աշխատանքներ, որոնք ցանկացած պահի հասանելի են <http://schooldance.am> կայքում՝ ինտերնետի միջոցով:

1.7. Բաժանորդագրություն Բովանդակությանը՝ Օպերատորի կողմից Բովանդակության ծառայությունների մատուցման պայմանները Բաժանորդին, որը համապատասխան գործողությունների միջոցով ընդունում է Օպերատորի առաջարկը՝ նախատեսող որոշակի ժամանակահատվածում վճարի դիմաց Տեղեկատվական համալիրից Մեդիա բովանդակության անսահմանափակ, շարունակական և ավտոմատ մուտք՝ : Բովանդակության բաժանորդագրության պայմաններով, Բովանդակության ծառայությունների տրամադրման յուրաքանչյուր ժամկետի ավարտին Բովանդակության ծառայությունների տրամադրումը ավտոմատ եղանակով երկարաձգվում է նոր՝ համանման կամ այլ ժամկետով՝ մինչև Բաժանորդի կողմից, սույն կանոններով սահմանված պայմաններով, Բովանդակությունից հրաժարվելը:

1.8. Անձնական հաշիվ՝ վերլուծական հաշիվ, որն օգտագործվում է Պայմանագրով մատուցված ծառայությունների ծավալը, ծառայությունների և (կամ) Բաժանորդային սարքավորումների վճարման հաշվում ներառված դրամական միջոցների մուտքը և ծախսը, ինչպես նաև այլ պարտավորություններ հաշվառելու համար:

1.9. Բովանդակության մատակարար՝ Օպերատորի գործընկերը («Տելեկոմ Կլուբ» ՍՊԸ), որը հանդիսանում է <http://schooldance.am> պորտալում ներկայացված Բովանդակության հեղինակային և հարակից իրավունքների իրավատերը:

1.10. «School dance» ծառայության օգտագործումն իրականացվում է Բաժանորդի և Վիվա-ՄՏՍ-ի միջև կնքված համաձայնագրի հիման վրա, որի մաս են կազմում «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կապի ծառայությունների մատուցման կարգը և ծառայության տրամադրման սույն Կանոնները ( ընդհանուր անվանումը՝ «Պայմաններ»):

1.11. Պորտալի հասցեն՝ <http://schooldance.am>:

## **2. Ծառայության նկարագրությունը և մուտքը**

2.1. Մուտքի ծառայությունը Բաժանորդին հնարավորություն է տալիս մուտք գործել <http://schooldance.am> պորտալում տեղադրված ծրագրային ապրանքատեսակներին: Ակտիվացնելով Ծառայությունը՝ Բաժանորդը հաստատում է, որ իր 18 տարին լրացել է և ընդունում է Մուտքի ծառայության տրամադրման մասին սույն Օգտատիրոջ համաձայնագիրը, ինչպես նաև հաստատում է, որ ծանոթացել և համաձայն է Մուտքի ծառայության տրամադրման Կանոններին:

2.2. Սույն Առաջարկի ընդունումը (ստորև սահմանված գործողությունների կատարման միջոցով) նշանակում է Բաժանորդի համաձայնությունը Մուտքի ծառայություն ստանալու համար:

2.2.1. Համարը որոշվում է ավտոմատ կերպով՝ Ծառայության ակտիվացման հարցումը սկսելուց հետո՝ «Դիտել», «Լսել», «Ներբեռնել» կամ «Բաժանորդագրվել» կոճակը սեղմելու միջոցով:

2.2.2. Սեղմելով «Դիտել», «Լսել», «Ներբեռնել» կամ «Բաժանորդագրվել» կոճակը՝ Բաժանորդը համաձայնում է փոխանցել իր բաժանորդային համարը Բովանդակության մատակարարին՝ <http://schooldance.am> ծառայության ակտիվացման և տրամադրման համար:

2.3. Ծառայությանը Wi-Fi սարքի միջոցով բաժանորդագրվելու դեպքում անհրաժեշտ է հեռախոսահամարի լրացուցիչ հաստատում:

2.4. Ընդունելով սույն Պայմանները՝ Բաժանորդը համաձայնում է, որ սույն Պայմանների շրջանակում Ծառայությունն ակտիվացնելու համար Օպերատորը

կարող է կիրառել այլ (լրացուցիչ) եղանակներ (ձեռնարկել քայլեր)՝ Բաժանորդին նույնականացնելու նպատակով:

### **3. Ծառայության արժեքը և հաշվարկները, վճարման կարգը և Ծառայության մատուցման պայմանները**

3.1. Մուտքի ծառայության արժեքը Բաժանորդից գանձվում է <http://schooldance.am> պորտալին Մուտքի ծառայությունների տրամադրման վերաբերյալ սույն Օգտատիրոջ համաձայնագիրն ընդունելու պահին, իսկ հետագայում պորտալում Բովանդակությունը դիտելու/ ներբեռնելու համար Բաժանորդի կողմից օգտագործվող ինտերնետ թրաֆիկի համար վճարումը կատարվում է առանձին՝ համաձայն Բաժանորդի սակագնային պլանի:

3.2. Ծառայության Մուտքը տրամադրվում է բաժանորդագրության հիմունքներով:

3.3. Ծառայությունն առաջին անգամ ակտիվացնելիս՝ Բաժանորդներին տրամադրվում է փորձնական օգտագործման ժամանակահատված՝ առաջին անգամ ակտիվացնելու պահից 1 օրացուցային օր տևողությամբ:

3.4. Անձնական հաշվի բավարար մնացորդ ունեցող բաժանորդների համար բաժանորդագրության արժեքը 1 օրացուցային օրվա համար 65 դրամ է (ներառյալ ԱԱՀ): :

3.5. Եթե Բաժանորդը չի ապաակտիվացրել Ծառայությունը, ապա, Բաժանորդի Անձնական հաշվին Ծառայությունների վճարի համար բավարար միջոցների առկայության դեպքում. Ծառայությունն ավտոմատ կերպով երկարաձգվում է նոր համանման ժամկետով՝ մինչև սույն կանոններով սահմանված կարգով Բաժանորդի կողմից հրաժարվելը:

3.6. Ծառայությունն ակտիվացնելու դեպքում, 3255 համարից Բաժանորդին կուղարկվի բաժանորդագրության, միջոցների դուրսգրման մասին SMS հաղորդագրություն (միայն Անձնական հաշվից գումարի առաջին գանձման ժամանակ):

3.7. Բովանդակության բաժանորդագրության կարգավիճակի մասին տեղեկատվությունը հասանելի է նաև <http://schooldance.am> կայքի «Պրոֆիլ» բաժնում:

3.8. Եթե Ծառայության երկարաձգման փորձի պահին Բաժանորդի հաշվին չկան բավարար միջոցներ՝ Բովանդակության Ծառայության ամբողջական վճարումն իրականացնելու համար, Ծառայությունները չեն ակտիվացվում/չեն երկարաձգվում:

3.9. Բովանդակությանը բաժանորդագրության պայմաններով Բովանդակության ծառայության երկարաձգման փորձերը կրկնվում են 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում: Եթե 30 (երեսուն) օրացուցային օրվա

ընթացքում Բաժանորդի Անձնական հաշվին Ծառայության արժեքի վճարման համար բավարար գումարի չափով դրամական միջոցներ չեն մուտքագրվում, բաժանորդագրությունը ապաստիվացվում է: Այն վերականգնելու համար անհրաժեշտ է կրկին կատարել ակտիվացում:

3.10. Վճարման համար բավարար դրամական միջոցների առկայության պարագայում, Ծառայության բաժանորդագրությունը կերկարաձգվի և դրամական միջոցները կգանձվեն բաժանորդի հաշվից:

3.11. Բաժանորդագրության ապաստիվացման դեպքում մուտքը Մեդիա բովանդակությանը արգելափակվում է՝ բաժանորդագրության ժամկետը լրանալու պահից. այն վերականգնվում է բաժանորդագրությունը կրկին ակտիվացնելու դեպքում:

3.12. «<http://schooldance.am>» ծառայությունից օգտվելիս Բաժանորդը վճարում է ինտերնետ թրաֆիկի համար՝ համաձայն սակագնային պլանի:

3.13. Լրացուցիչ Ծառայության բաժանորդագրությունը վերականգնելու համար Բաժանորդը պետք է կրկին ակտիվացնի այն:

3.14. Ծառայությունը կասեցնելու համար Բաժանորդը պետք է ուղարկի «STOP» բովանդակությամբ SMS հաղորդագրություն 3522 կարճ համարին:

3.15. Ռոումինգում գտնվող բաժանորդների համար Ծառայության շրջանակում SMS հաղորդագրության և ինտերնետ թրաֆիկի արժեքը գանձվում է Վիվա-USU-ի միջազգային ռոումինգ ծառայությունների համար գործող սակագների համաձայն:

3.16. <http://schooldance.am> ծառայությունից օգտվելիս՝ Բաժանորդը համաձայնվում է 3255 տեխնոլոգիական համարից ստանալ սպասարկման նորություններով անվճար տեղեկատվական հաղորդագրություններ, ինչպես նաև՝ պորտալի միջոցով և այլ եղանակներով ստացվող այլ տեղեկատվական հաղորդագրություններ:

#### **4. <http://schooldance.am> պորտալում բովանդակության տրամադրման պայմանները**

4.1. Բաժանորդն իրավունք ունի օգտագործել Մուտքի ծառայության միջոցով ստացված Բովանդակությունը միայն անձնական նպատակներով և իրավասու չէ օգտագործել այն՝ երրորդ անձանց վաճառելու կամ այլ եղանակով օտարելու միջոցով տարածելու համար:

4.2. <http://schooldance.am> պորտալը պատկանում է «Տելեկոմ Կլուբ» ՍՊԸ-ին, որը կարող է սահմանել կանոններ, սահմանափակումներ և այլ պահանջներ՝

կապված տվյալ տեղեկատվական ռեսուրսում գտնվող բովանդակության օգտագործման հետ: Տեղեկատվական ռեսուրսի (<http://schooldance.am> պորտալ) բովանդակության համար պատասխանատվությունը կրում է «Տելեկոմ Կլուբ» ՍՊԸ-ն:

4.3. Բաժանորդը սույնով հաստատում և համաձայնում է, որ, Ծառայությանը բաժանորդագրվելիս, բոլոր վճարներն ու գանձումները ենթակա են վճարման՝ անկախ նրանից, թե արդյո՞ք բաժանորդագրման պահին Բաժանորդի շարժական սարքավորումները համապատասխանում են որևէ համատեղելիության չափանիշի: Օպերատորը չի վերադարձնում դրամական միջոցները՝ կապված անհամատեղելի շարժական սարքավորումների և բրաուզերի միջոցով Բաժանորդի կողմից Ծառայություն մուտք գործելու անհնարինության պատճառով:

4.4. Օպերատորը պատասխանատվություն չի կրում գովազդի որևէ ձևի և (կամ) բաներային գովազդի բովանդակության, թուղթիկների և ցանկացած այլ գովազդային ձևաչափերի համար, որոնք ներկայացված են կայքում և հավելվածում: Նման բովանդակության համար պատասխանատվությունը կրում է բացառապես գովազդատուն կամ նրա օրինական ներկայացուցիչները:

## **5. Պատասխանատվության սահմանափակում**

5.1. Բաժանորդն ընդունում և համաձայնում է, որ անձամբ է կրում Մեդիա բովանդակության օգտագործման ռիսկը, և որ Մեդիա բովանդակությունը տրամադրվում է «այնպես, ինչպես կա» և «եթե առկա է» սկզբունքներով: Օպերատորը, տրամադրելով Մեդիա բովանդակությանը մուտքի ծառայություններ, պատասխանատվություն չի կրում դրա առկայության, բովանդակության և ֆունկցիոնալության համար:

5.2. Բաժանորդը համաձայնում է օգտվել ծառայության օգտագործման արդյունքում ներբեռնված կամ այլ կերպ ձեռք բերված Մեդիա բովանդակությունից՝ սեփական հայեցողությամբ և անձամբ կրելով ռիսկերը, և Օպերատորը պատասխանատվություն չի կրում Բաժանորդի բջջային կամ այլ սարքավորմանը հասցված վնասի, կամ նման օգտագործման արդյունքում տվյալների կորստի համար:

5.3. Գործող օրենսդրությամբ թույլատրվող առավելագույն չափով, Վիվա-USU ընկերությունը չի տրամադրում բացահայտ կամ ենթադրվող պայմաններ և երաշխիքներ, ներառյալ, բայց չսահմանափակվելով, իրացվելիության, որոշակի նպատակների համար պիտանելիության և մտավոր սեփականության իրավունքների չխախտման՝ ենթադրյալ երաշխիքներ և պայմաններ՝ <http://schooldance.am>-ի միջոցով ներբեռնված կամ այլ կերպ ստացված ցանկացած Մեդիա բովանդակության առնչությամբ: Բաժանորդն ընդունում է սույն պայմանը և անվերապահորեն համաձայնում է վերջինիս:

5.4. Բաժանորդն ընդունում և համաձայնում է, որ Վիվա-ՄՏՍ ընկերությունը պատասխանատվություն չի կրում Բաժանորդի հանդեպ (ներառյալ՝ պայմանագրային պարտավորությունների շրջանակում)՝ վերջինիս կրած ուղղակի, անուղղակի, պատահական, դիտավորյալ, միջնորդավորված կամ տուգանքի տեսքով վնասների համար, որը նա կարող է կրել Ծառայության միջոցով ներբեռնված Մեդիա բովանդակությունն օգտագործելիս, ներառյալ՝ տվյալների կորստի համար՝ անկախ նրանից, թե Վիվա-ՄՏՍ-ն ունեցել է նման վնասների հնարավորության մասին որևէ ենթադրություն, թե՞ ոչ:

## **6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս մաժոր)**

Սույն Պայմանների շրջանակներում ստանձնած պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարմանը խոչընդոտող անհաղթահարելի ուժի հանգամանքների առաջացման դեպքում, մասնավորապես՝ հրդեհ, տարերային աղետներ, պատերազմներ, պետական մարմինների կողմից Կողմերի գործունեության արգելում կամ սահմանափակում կամ այլ համանման հանգամանքներ, սույն Պայմաններով ստանձնած պարտավորությունների իրականացման ժամկետները երկարաձգվում են՝ այդ հանգամանքների տևողության ժամանակահատվածի համամասնությամբ:

## **7. Ընդհանուր իրավական պայմաններ**

7.1. Սույն պայմանները հանդիսանում են լիակատար իրավաբանական համաձայնագիր Բաժանորդի և Վիվա-ՄՏՍ ընկերության միջև և կարգավորում են Վիվա-ՄՏՍ-ի բջջային հավելվածների՝ Բաժանորդի կողմից օգտագործումը:

7.2. Վիվա-ՄՏՍ-ն իրավասու է ծանուցել սույն Պայմանների դադարեցման կամ փոփոխման մասին՝ <http://schooldance.am> կամ <http://mts.am> կայքերում համապատասխան տեղեկատվության տեղադրման միջոցով: Պայմանները համարվում են չեղարկված կամ փոփոխված ծանուցման մեջ նշված պահից:

7.3. Բաժանորդն ընդունում է, որ եթե Վիվա-ՄՏՍ-ը չի իրականացնում և չի կիրառում սույն Պայմաններով (կամ ցանկացած գործող օրենքով) իրեն վերապահվող օրինական իրավունքները կամ իրավական պաշտպանության միջոցները, այն չի համարվում Վիվա-ՄՏՍ ընկերության կողմից իր իրավունքներից հրաժարում, և տվյալ իրավունքները և իրավական պաշտպանության միջոցները վերապահվում են Վիվա-ՄՏՍ ընկերությանը:

7.4. Եթե այս հարցի վերաբերյալ որոշման իրավունք ունեցող դատարանը սահմանի, որ սույն Պայմանների որևէ դրույթ անվավեր է, ապա այդ դրույթը հանվում է սույն Պայմաններից՝ չսահմանափակելով սույն Պայմանների մնացած դրույթները: Սույն Պայմանների մնացած դրույթները մնում են վավեր և կրում են իրավաբանական ուժ:

7.5. Ոչ Բաժանորդը, ոչ էլ Վիվա-ՄՏՍ ընկերությունը չեն կարող փոխանցել կամ զիջել սույն Պայմաններով նախատեսված իրավունքները՝ առանց մյուս կողմի

Նախնական գրավոր համաձայնության: Ոչ Բաժանորդը, ոչ էլ Վիվա-USU ընկերությունը չեն կարող փոխանցել սույն Պայմաններով նախատեսված պատասխանատվությունը կամ պարտավորությունները՝ առանց մյուս կողմի նախնական գրավոր համաձայնության:

7.6. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Ծառայությունից օգտվելու հետ կապված՝ Բաժանորդի և ցանկացած երրորդ անձի միջև որևէ վեճի կամ տարաձայնության համար: Բաժանորդն իր վրա է վերցնում նման երրորդ անձանց հետ աշխատանքի հետ կապված բոլոր ռիսկերը և ազատում է Օպերատորին և նրա մատակարարներին տվյալ վեճերի հետ կապված բոլոր պահանջներից և վնասներից:

7.7. Սույն Պայմաններով, Կողմերի միջև ծագած իրավահարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ: Սույն Պայմանների շրջանակում, Կողմերի միջև վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

## **8. Կոնտակտային տվյալներ**

Ծառայության մատուցման հետ կապված լրացուցիչ հարցերի դեպքում, խնդրում ենք գրել [claim@telecom-club.com](mailto:claim@telecom-club.com) էլ. փոստի հասցեին: